ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հունվարի 2021 թվականի թիվ 10-Ա

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետով, «Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի հավերժացման մասին» ՀՀ օրենքով

որոշում եմ

1. ՀՀ Տավուշի մարզից հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի հավերժացման նպատակով աշխատանքներ կատարելու համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

   Թաթուլ Ստեփանյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ, հանձնաժողովի աշխատանքները համակարգող

   Հանձնաժողովի անդամներ.

   Մերուժան Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
   Հայկ Փաշինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԾ հարցերով բաժնի վարիչ
   Մարինե Խաչատրյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Զոհվածների բնակավայրերի համապատասխան համայնքների ղեկավարներ,
Համապատասխան դպրոցների տնօրեններ:

2. Հանձնաժողովին.

Երկշաբաթյա ժամկետում մարզպետի հաստատմանը ներկայացնել հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի հավերժացման նպատակով առաջարկությունների փաթեթ:

ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

X _____